




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՆՎԱԳՆԵՐ

ИНСТИТУТ
ВОСТОЧНОЙ
Академия наук
СССР

• Պ Ե Տ Յ Ր Ա Տ •

891.99

2-17

6 NOV 2011 A 233

№ 9 ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ № 9

891.99

Հ-17

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՆՎԱԳՆԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

30 MAY 2013

36870

Պետական տպարան

Գր. 7575 (Բ)

Պատվեր № 2309

Տիրաժ 3000

Սրբազրիչներ Ս. Տ.-Պողոսյան Հ. Հակոբյան



60535-67

ԿԱՐՄԻՐ ՔԱՐԵՐԸ .—

Զինվել ես ջահերով լուսե ,
Արթի'կ , վարդազույն արթիկ ,
Կրճիդ կարմիր տուֆ ե բուսել
Պայծառ մայիսյան վարդից :

Քո սիրուն լեռների վրա ,
Ուր ավազ պոետը մի որ
Մասրենու մոտ խիել ե վրան
Յեվ յերգել իր «Մառառ Զարոն» ,
Դինամիտն ե պայթել աշտեղ ,
Եւ չկա են հի'ն մասրենին—
Հիմա մասրենու վարդի տեղ
Հասում ե նոր վարդի հեղեղ :

Մանթաշի ջրերի ափին
Լուսալուսնք դինամոն ե յերգում ,
Յեկել ե դոնեցի Իվանը ,
Լեռներում լարել ե մեքենան ,
Յեկել ե Շիրակից Վահանը ,
Վոր նոր-նոր յերակներ բանան :
Հարվածային բազուկները հզոր
Խփում են ժայռերին , խփում ,

Մեր տեմպերն և ուժը բոսոր
Հեռներն ել ներքե և դլորում :

Յեւ տուֆը դիզվում , դիզվում է ,
Մեքենան խոսում և անուշ ,
Սղոցը քարերը լիզում է ,
Կտրատում ու դուրս է հանում :
Արթիկ , վորդաքար Արթիկ ,
Ծաղկում է փեշին Մանթաշի ,
Վորպես բարձրացող բարդի՝
Աճի՛ր ու հզոր բոյ քաշի՛ր :

ԱՐԹԻԿԻՆ

Այս հին Արթիկն է , թե՛ լույսերի լիճ ,
Վոր ալիքներով ժպտում է հեռից :
Այս հին Արթիկն է :

Եդ ո՞վ է շինել ու դրել այնտեղ ,
Սարերի վրա բյուրավոր կանթեղ .
Եդ ո՞վ է շինել :
Այն ի՞նչ աչքեր են հեռվից հմայող ,
Վոր կախարդվում է ամեն մի նայող ,
Այն ի՞նչ աչքեր են :

Դրանք ասողե՞ր են իջել յերկնքից ,
Վոր սիրուն զուգեն կարմիր քարհանքը ,
Դրանք ասողե՞ր են :
Դրանք չե՞ն մարի գիշերվա մթին—
Յերբ լուսնի ցոլքը սարից ցած կաթի ,
Դրանք չե՞ն մարի :
Են ո՞ւմ են հսկում խավարի ժամին
այդ պահակները նետերով կարմիր .
Են ո՞ւմ են հսկում :

— Արթիկ տուֆն է նա , դու չե՞ս իմանում
Վոր լեռների մեջ տուֆ է կարկաչում .
Ո՞վ է իմանում :

ՎԵՐՆԵԼՔԻ ՅԵՐԳԵՐ

Տարիներ են կարկաչել, յերկար ճամբա յենք կծկել,
Արահետներ ենք անցել, նեղ կիրճերից անավոր,
Դասակարգը պայքարով խմել, ուղի յե բացել,
Յերթն առաջ ե անցել, ու դորացել որավոր:

Մ'ութ ծովերով ենք անցել, տեսել ենք խոլ փոթորիկ,
Ծովաչներ ենք տեսել, հաչել են մեր նավերին,
Նավը ճեղքել ե ջուրը, թռել նորից ու նորից
Այն փոթորկոտ ու ցասկոտ հոկտեմբերյան որերին:

Ողանավերն են ճախրել, կամարի տակ յերկնքի,
Բարձրացել ենք դեպի վեր, ամսերի մեջ ենք սլարել,
Յերբ տնքում եյին ուրբը հոկտեմբերի յերկունքից,
Կռվել, համառ ենք կռվել ու հաղթանակ ենք տարել:

Հովիտներում, դաշտերում դադաթներում լեռների
Ելրիմներ ենք շինել մենք, պահ ենք տվել քարերին
Նրանց սրտերը կարմիր՝ մեր որերի արևից,
Առած՝ գնում ենք դրոհ ու նորանոր պայքարի:

Հովիտներում, դաշտերում, դադաթներում լեռների
Արձաններ ենք գրել մենք, վոր սերունդները տեսնեն,
Վոր սերունդները տեսնեն, և արձանի կողերին
Կարգան գրքից մարտերի, արյունագիր յերեսներ:

Գիզանդներ են բարձրանում ու բարձրանում ամեն ոք,
Քանի զիզանտ՝ այնքան բերդ և բերդերը անառիկ,
Յերկիրն իմ մի անտառ՝ զիզանտներից ընդհանուր,
Յերկիրն մի արև, վոր աշխարհում կվառի:

Բարձրացել են դեպի վեր դործարանները հզոր,
Խոյացել են ժաշոյի պես դեպի յերկինքը վերև:
Իլիկներն ու մեքենան յերգում են զիլ զիշեր-զոր,
Այնտեղ, ուր մութ ու խավար և ամայի յեր յերեկ:

Այն մեր բազումն ե դորեղ, սատղեր շինել ու շարել
Բայլչեիկյան հանքերում, բայլչեիկյան հանքերում:
Տե՛ս, սատղերը յերկնքի պահ են մտել ու մարել,
Բաց սատղերը մեր յերկրի բոցկլտում են ու վառվում:

Տրակտորները տիտան դաշտում վաշտեր են շարել,
Լողում են յեն արտերում, ինչպես նավերը ծովի,
Լուսե գետեր-գալար դաշտին դոտի յեն դառել,
Կարկաչում են ու կանչում սարից յերդերը հովի:

Դասակարգն ե դրոհում շեփորներով հաղթական,
Ամբոցներն աշխարհի, վոր սրտերը հրդեհի,
Են ո՞վ ե ո՞վ չի լսում յերգը հզոր, մարտական,
Վոր հնչում ե այնպես զիլ հոկտեմբերի փողերից:

ՀՈՒՇԵՐԳ

Ծիծաղում են, ծափ են տալիս ծառերը,
Այս ծառերը հուշեր ունեն, հի՛ն հուշեր,
Այդ հուշերը սիրտս յերգով վառել են,
Գառն թափի նոյեմբերյան մի գիշեր:

Լուսնի լուսը համբուրում եր թփերին,
Յեվ թփերը լուսածիծաղ, չչունով
Որորում եյին հրացանի զարկերից:
Մենք կոպում ենք կոմյերիտի ավյունով:

Այս ծափ տվող ծառերի տակ, մի գիշեր,
Յես հիշում եմ՝ նոյեմբերի վերջերին
Ընկավ ընկերս՝ կոմյերիտ դանդաղահեր,
Հաղթանակի ժպիտը ջինջ աչքերին:

.
.

Յեվ ծառերը տարիների հետ աճում,
Բարձրանում են, վորպես վկա վերելքի,
Պիտի պատմեն թե ինչպես ենք նվաճում,
Նոր-նոր բերդերն ու ամրոցները յերկրի:

Ինչքան տեսնեմ չիբիմը հին ընկերին,
Վարարում ե սիրտս նորնոր հուզերով,

Կարծես ասում ե՝ «մեր գրաված դիրքերից»
Յած չիջնես, առաջ անցիր մարտերով»:

Ծափ են տալիս, ծիծաղում են ծառերը,
Այս ծառերը հուշեր ունեն, հի՛ն հուշեր,
Այդ բոլորը սիրտս յերգով վառել են,
Գառն թափի նոյեմբերյան մի գիշեր...

ԱՐՁԱՆԸ

Աղբյուրն անուշ դլգլում ե
Զինվորի արձանի տակ,
Արձանի շուրջը ծլում են
Կարմիր ծաղիկներ ու մի ծառ:

Զուրը զուլալ, վորպես դոհար,
Արևի հետ՝ առավոտ
Ոծում ե ծաղկունքը դալար,
Յողում արձանը հինավուրց:

Յերդում ե միշտ աղբյուրը հին,
Կոմժունարի արձանի մոտ
Նա տեսել ե քսան թվին,
Վոր քաջ մեռավ մի զինվոր:

Քանի մայիս յեկավ, անցավ,
Մայիսից Սարիղամիշի,
Են զինվորը անմահացավ—
Յեվ դեռ յերկար կհիշվի:

Անմահ ջուրը մի յերգ կերպե,
Անմահ դործին զինվորի,
Թե ինչպես ե կարմիր ներկել
Վառ կյանքը մեր որերի:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀՈՒՅՁԵՐ.—

Յեկել եմ, յեկել եմ այցի
Կոլխոզի դաշտերից հեռու,
Ուր վոսկի դեզերը հացի
Շարեւ ենք՝ անթումբ արտերում:

Բերել եմ բանակին բարե
Արտերից, սրտերից, հույզոտ.
Բերել եմ խնդութուն, արև
Իմ յերկրի բանակին հզոր:

Զգիտեմ, ինչպե՞ս յերգ հյուսեմ
Իմ յերկրի կարմիր վահանին,
Վոր յերգեմ սվինները լուսե,
Վոր վաղ հաղթանակ սկիտ տանին:

Ինձ ասին՝ յերգերը այս հուր
Նվեր տար բանակին, յերգի՛ր
Կարմիր մարտիկին քաջասուր,
Նվեր տուր կոլխոզից, յերգի՛ր:

Յեկել եմ, յեկել եմ այցի
Կոլխոզի դաշտից հեռու,
Ուր կարմիր դեզերը հացի
Շարեւ ենք՝ անթումբ արտերում:

ԳԱՇՆԱԿ ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻՆ

Վոռնում են, կազկանձում նորից
Դայլերը հին, յեզբից իմ յերկրի,
Վոռնում են ամեն ուր վորջերից
Բայց յերկիրն իմ իր վերելքը կերդի:

...Կտեսնեք ուժը մեր յերկրի
Մեր ամեն մի սրտում կա մի բերդ,
Վոչ մի բերդ յերբեք չի ընկնի
Բոյլչեիկ բերդերից բարձրաբերձ:

Թող սլայթի ձեր վերջի վառողը,
Յեթե սլայթի այդ վառողը փոտած
Նա կայրի միայն ձեր մոռթը,
Թող սլայթի ձեր վերջին վառողը...

Խմեցի՛ք իմ յերկրի արյունը
Ու հարբած չրջում եք աշխարհում,
Անցել ե ձեր արնավարդ գարունը,
Ուր գանգերի վրա եյիք պարում:

Շրջեցեք, ինչքան վոր կուգեք,
Փարիզից Սիրիա ու Բերլին,
Ու Կովկաս պատառ յերազեք
Այդ պատառը չի հասնի ձեր բերնին:

Անթիվ են բերդերը մեր անառիկ,
Բերդերը մեր կամքից են հիմա,
Թե փորձեք այդ բերդերը առնել՝
Կառնեք կործանում ու մահ

Յերկիրն իմ ամբոցներ ունի բյուր
Աշխարհի ծայրերում հեռու,
Ուր բոլջեվիզմը, վորպես արյուն,
Շրջում ե միլիոն սրտերում:

ԱՐՇԱՎԻ ՅԵՐԳԵՐԻՅ

«Վոչ մի բերդ չկա, վոր բայելիկները չգրավեն,
ՍՏԱԼԻՆ»

Դու գնացիր կուլտ արչավի
Քաղցրածիծաղ ու հուսավոր,
Քո վճիտ աչքերում ծավի՜
Յեվ կար գրոհ և կար պայքար :

Մենք ղնացինք գյուղ ու քաղաք,
Գրոհ տալու ամբողջներին,
Են վո՞ր ամբողջ կհամառի
Մեր Լենինյան մարտկոցներին :

Տես, իմ Յեվա հետ չմնաս
Մեր պայքարի բոցե ճամբին,
Են, ինչ վոր մեզ կտա վնաս,
Խիիր թափով, քանդենք հիմքեց :

Ու յերբ մի որ կտեսնեմ յեռ
Պայքարի մեջ հաղթել ես դու,
Պայքարի չափ կսիրեմ քեզ,
Վառ կմնառ դու իմ սրտում :

Ն Ս Մ Ա Կ Ը

Յես մի ծանոթ աղջիկ ունեմ՝
Կեմ յերիտուհի, անունը՝ Յեվա
Ինքը պայծառ մի դարուն ե,
Մերտը վարար՝ ինչպես Նեվա :

Գյուղն ե ապրում՝ ընկեր Յեվան,
Նամակներ ենք գրում իրար .
Սրտով վաղուց ենք հարևան,
Բջջից եմ ծանոթ նրան :

Գրում ե նա «Նվիրիր քեզ
Ձեր սովխողին, լավ աշխատիր,
Մեծ հույս ունեմ ըո վրա, տե՛ս,
Աշխատանքն ե հիմա պատիվ»—

Յերբ դաշտում ձեր իջնի ամառ
Արտը գնա, վորպես հնձվոր,
Հովերի հետ բարևս առ,
Բարևս խոր ու հեռավոր :

Յերբ ամառը գնաս հնձի,
Իմացիր, յես ել եմ դաշտում,
Թող արևը դեմքդ խանձի,
Ու քրտինքդ հոսի արտում :

Նամակս պարզ ե ու վճիտ,
Ուրիշ բառեր չունեմ հիմա,
Բառերս պարզ են ձեր լճից,
Են ձեր լճից՝ դյուղի դիմաց»:

Յես մի ծանոթ աղջիկ ունեմ,
Կոմյեբիտուհի, անունը Յեվա,
Ինքը պայծառ մի գարուն ե,
Սիրտը վարար, ինչպես Նեվա:

79.56509

Խ Ո Ց Ա Հ Ա Ր Ք

Մենք ենք հիմա այս սարերում—
Մով սարերում կապտամշուշ.
Խոտհար մեքենան լարել ու՝
Խոտ ենք հնձում գիշերով ուշ:

Կիսալուսին հին գերանդին,
Շատ ե այստեղ յերգել, փայլել,
Նա յերկար ե իջիսել հանդին,
Ինչպես ճռուունը հին սայլի:

Ինչքան քրտինք ենք մենք թափել
Այս լանջերի ծաղիկներին,
Բայց տարել են, տարել, լավել՝
Յերախները հարուստներին:

Մենք ենք հիմա ողակ-ողակ,
Գրկել դուք ծաղկոտ սարի,
Մեքենաները կ'սողան,
Կոլխոզնիկի բազկից արի:

Սիրտ ու մեքենա ենք լարել,
Հունձ ենք անում սարի լանջում.
Խոտերից դեզեր ենք չարել:
Հնձում ենք ու յերգ ենք կանչում:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ԲԱՏՐԱԿԻ ՅԵՐԳԵՐ

Յերեկ —

Քանի՛՜—քանի՛՜ անգամ ես արտերի մոտից
Սնցել եմ ու նայել հասկերին վռակեփայլ։
Յեվ քչել եմ հոտը դեպի սարն արոտի,
Ոտար ճամբորդի պես՝ մենակ ու համրաքայլ։

Այս արտերի կրծքին ակոսներ ե չացել
Այն հին խոփը ծանր՝ որերի պես ժանդոտ։
Այս լեն դաշտերի մեջ ինչքան սիրտ ե լացել—
Յերեկը՝ կիսաքաղց, գիշերներն՝ անքուն։

Դաշտե՛ր, կանաչ դաշտեր, ձեր այդ ծաղկոտ կրծքին
Յես հուշեր եմ հյուսել—բատրակի դառն հուշեր,
Պուրտն ե ինձ համբուրել և շանթը յերկնքի
Իմ կողքից ե անցել ու անդունդը իջել։

Իմ վերմակն ե յեղել մի հովվի քեչա,
Ձեր այդ հին քարերը իմ բարձն եյին մի որ,
Փոթորիկն ե յերգել գլխիս վերն հաճախ,
Յերգել ու վռոնացել մի խելադար ձենով։

այսոր —

Սարերը ծաղկել են, ջրանցքները վարար
Շրջում են հին դաշտում, դառնում բարակ առու։

Արտերը ծփում են, ել չեն մնա ծաղավ,
Սիրտս հասկերի հետ կյերգե ամեն գարուն։

Ու հրճվում եմ անհուն, արտը մերն ե հիմա,
Կոլխոզն ե ցանել մեր, կամքին իշխող չկա,
Վաղն կոլխոզնիկներն այստեղ հնձի կգան
Յեվ կհնձեն արտը, ու արտը կտքա։

Քանի՛՜, քանի՛՜ գարուն, ես արտերի հողին
Սերմեր պիտի տանք, ու ամառն ուզենք,
Յեվ մեր հուշերը հին հողերի մեջ թաղենք,
Նոր—նոր հուշեր հյուսենք—հուշեր վառ ու լուսե։

ԳԵՂՃԿՈՒՀՈՒՆ

Վարդ մի կայցնե կրծքիդ,
Կի՞մդ վարդից ել վառ ե.
Եթա կոլխողնիկ—թուխ աղջիկ,
Ամեն աչքդ մի արև:

—Գիտե՞ս աղջի, են որից,
Յերբ քեզ տեսա ձեր արտում.
Բո աչքերի կայծերից
Ուրձ—խուրձ լցրիր իմ սրտում:

Հարվածային սե՛վ աղջիկ,
Հանդերի հերոս աղջիկ,
Սրտիս մեջ սեր ես ցանել,
Վոր արտերի պես աճի:

Յերբ մտնում եմ դործարան,
Յերբ իլիկները խոսեն
Սիրտս դառնում ե ծարավ:
— Ինչո՞ւ սիրտս վառեցիր...

Յերբ արձակուրդս հասնի՝
Կ՛գամ կոլխող բրդադ—
Ձեր արտերում միասին
Դեզեր դնենք շարեշար:

Վարդ մի՛ կայցնի կրծքիդ,
Սիրտդ վարդից ել վառ ե.
Եթա, կոլխողնիկ—թուխ աղջիկ,
Ամեն աչքդ մի արև:

ՔՐՔՈՒՀԻ

Քրդուհի՛, սիրուն քրդուհի,
Քրդուհի սարի քրդուհի,
Հրդեհ ես տվել իմ սրտին
Յեվ սիրտս ի՞նչպես, ի՞նչպես,
Աչքերիդ հրդեհը չ՛ ընդունի:

Յայլեցի, սարեցի Ձիչակ
Այս յերգում իմ սիրտն եմ դրել,
Յերբ ձեր սթաթից ցած իջա
Նստեցի մի քարի վրա,
Քեզ համար այս յերդն եմ դրել:

Հրահանգչուհի՛, լեռնեցի Ձիչակ,
Ալադյադի կանաչ լանջին
Դու բացիր ծողովը կանանց,
Յեկել եյին բոլորը քո կանչից՝,
Վոր սրտերը քո առաջ բանան:

— Ոչորքն ե յեղել մեր յերկինքը
Յեվ առիթի սարդերը՝ ընկեր,
Նստել ու շարժել ենք իլիկը,
Մինչև վոր մուլն ե ընկել:

Բերել են մեզ՝ լաչակ, փուշի,
Հաղել են՝ անարև, փակված

Մեր սիրտը շորից շուտ է մաշել,
Արտասուքն է դառել առվակ:

Մանկուց են նշանել զոռով,
Խփել են ու արյուն թափել,
Բարձրացել է լաց ու վորոտ
Ու գլուղը թափար յե կապել:

— Կենցաղը դեռ հին է ու հիվանդ .
Յեվ հիվանդը մեռնում է այսօր .
Նոր կենցաղն է ծաղում, ջիվան
Կյանքի պես անմահ, հզոր:

Ու մեկ-մեկ բացվում են սրտերը,
Սրտերը հնամյա մութից .
Փոխվում են մեղ հեռու քրդերը,
Են կապույտ Ալազյաղի ուսին:

Ժողովը հուզված է սարում .
Սարում պայքարն է աճում .
Քրդուհիներն են բարձր լեռներում
Նոր կյանքի դիրքերն են նվաճում:

Քրդուհի՛, սիրո՛ւն քրդուհի,
Հրահանգուհի, սարի քրդուհի,
Խոսքերդ վորպես հրդեհի՛
Բոցում են դեռ սիրտս հեռուն:



Գարո՛ւն է, կոլխոզնիկ Վերդին,
Յես ու դու՝ տրակտորիստ՝ դաշտում .
Յեվ մի որ, յերբ դուրս գանք հերկի,
Կ՛հանդիպենք իրար հանդում:
Դու կ՛դաս դիմացի արտից,
Բարեով կ՛Ժպտանք իրար,
Մի բան կտանես իմ սրտից,
Նստած տրակտորիստ վրա:

Ամառը հասկերը կհասնեն
Կհասնեն և հույզերը մեր...
Մենք նորից իրար կտեսնենք,
Վորպես հնձվոր ընկերներ:

Գարուն և, տրակտորիստ Վերդին,
Իսկ մենք հարեան դաշտում:
Յես դիտեմ, յերբ դուրս գանք հերկի
Կհանդիպենք իրար յես ու դու:

ԿՈՒԽՈՋԻ ԱՂԶԿԱՆ

Ձինջ գիշեր ե. դուրան դաշտում
Յեկ հերկում եմ ե. յերգում,
Վառ աստղերն ել յերկնից իջել,
Լողանում են ջրանցքում:

Յես հերկ կանեմ, յերգ կհյուսեմ
Կոլխոզեցի քեզ համար.
Յես վար կանեմ, ցորեն ցանեմ,
Արտս զուգեմ այս ամառ:

Շատ եմ սիրում՝ անհուն սիրով,
Թուխ-թուխ աչերդ վճիտ.
Սիրտս լի յե նոր յերգերով
Յերգս զուլալ ե լճից:

Առավոտյան արեն անուշ,
Կբարձրանա են սարից,
Դու ինձ համար հաց կ'բերես,
Ծիծաղը վառ յերեսիդ:

Դուրան դաշտի յերկար արտում,
Լուսնի տակ հերկ եմ անում.
Աստղ ու լուսին սբտիս մոտիկ,
Լողանում են ջրանցքում:

ԿՈՒԽՈՋԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐ

Ծաղկավառ գարունը բացվել ե արդեն
Մեր կոլխոզական հանդերի վրա,
Դնանք արտերը կոլխոզնիկ Աշխեն,
Վարենք ու ցանենք, լարենք մեքենան:

Առավոտն անուշ արե կ'ծաղի,
Արտը լուսաչող շապիկ կ'հագնի.
Ջրանցքը քաղցր մեզ հետ կ'խոսի,
Յերբ տրակտորը արտն ահոսի:

Իրիկունը պարզ լուսնի լուսի տակ
Լամպերը կվառվեն սյուների ճեղմակ.
Այդ լույսերի տակ՝ ցանենք արտերը
Վոր ամռան շարենք կարմիր բարձրերը:

ՅԵՍ ՈՒ ՄԵՔԵՆԱՍ

Դաշտերի մեջ անծայրածիր, արևի տակ լուսավորվուր,
Տրակտոր իմ ճեղքել՝, անցել՝, ճեղքել՝ թմբերը
պապական,
Ի՞նչը կարող ե համառի քո պողպատե խոփերին սուր,
Յեվ իմ սրտին հուղավարար, վորին կանչում ե ապաղան

Գիտե՞ս ինչքան մուսյլ ու մութ պատմություն կա
թմբերի տակ,
Են որերից սև ու գաժան, յերբ՝ սերմն արնով եր
ներկված,
Վկա են մեր սարերը և վկա՝ յերկինքը կապուտակ.
Քանդիր, քանդենք պատենչը հին և վոչ մի հետք թող
չերևա:

Ուրիշ եջեր ենք մենք գրում մեր դաշտերի սրտի վրա,
Քո պողպատե լուսե գրչով, ակոսների տողերի մեջ,
Հատիկները, վորպես տառեր մենք կշարենք խորքում
նրա,
Վոր ծիլեր տան ու զորանան, սիրուն ու սև հողերի մեջ:

Ինչքան անո՛ւշ, զիլ են յերգում մեքենաս ու մոտիկ
առուն,
Կոլեկտիվի լե՞ն արտերում, վորպես մի հաղթ պայքարի
յերգ,

Յերգի միջից յերևում ե բոլեվիկյան ցանքի դարուն,
Վոր ցանում ենք վոսկի ցորեն՝ հանդերում լայն ու
անյեղերը:

Իմ սրտում ել մի դարուն կա, դարունից ել պայծառ ու
մատ:

Յեվ նրա մեջ հազար յերգեր, յերգեր՝ հույզի ու
պայքարի,

Դասակարգը սրտիս տվեց մի մարտական յերգի քնար,
Վոր յես լարեմ հանդերի մեջ, վոր մեքենաս ուրախ
պարի:

ՃԵՐՄԱԿ ՔՈՒԼԱՆԵՐԸ

Արտերը վարդեր են հաղել,
վարդերը հերմակ են, քուլ-քուլ,
Յեւ ախպետ սիրուն են բացվել
վարդերը՝ դաշտերի փրփուր:

Արեւ ժպտում է անուշ,
նաղում է բամբակի քուլան,
Արեւ վարսերն է հանում
ու փռում դաշտերի վրա:

Շողերն իջել են սարից
Նստել են փնջերի վրա,
Բամբակն է հողի հետ պարում,
Պարում է նվազով նրա:

Յերել ենք վաշտերով հուլպուտ,
Ու յեկել քամբակի հնձի.
Արեն ինչքան վոք բոց ունի,
Թող իմ բաց ճակատը խանձի:

Շարքերը, կոմյերիա շարքերը
ցրվել են արտում, քաղում են,
Շարքերը՝ դրկել են մարդերը,
Մասները փնջերում խաղում են:

Են-վո՞ք, են վո՞ք դարձանը,
Բացվել է ալոքան ծաղիկ,

Են վո՞ք հովիտը կարող է
Այսքան վարդերով ծիծաղի:

Այս քուլաները սիրուն
Պիտի գնան մանրանան
վոք դրկեն իլիկները,
Իլիկները վոք դառնան...

Այս բամբակի փնջի մեջ
Յերգ եմ հյուսել յես հիմա.
Ուղարկում եմ քեզ նվեր,
Բանվորուհի, իմ թամար:

Յերգիս մեջ սիրտ եմ դրել,
վոք յերգերս վառ մնան:

ՄԱՍՐԵՆԻՆ՝

Ինչքա՛ն ես մեծացել, աճե՛լ,
Մասրենի՛, իմ սիրուն՝ մասրենի,
Փոխվել ես, կարծես թե ե՛ն չես,
Մասրենի՛, իմ ճերմակ մասրենի:

... Բացվում են հուշերիս ծալքերը,
Բայց սև են նրանց թերթերը...
—Ահա հին մասրենին ու արտերը,
Ահա յերկար ու սև հերկերը:

Բանում եր գիշեր ու յերեկ,
Բանում եր իմ հայրը հանդում,
Վոր քարերից մեզ համար հաց քերեր,
Իմ հայրը՝ մի բատրակ անտուն:

Յանում ու հերկում եր հաճախ,
Խաչանի դուրան արտերը,
Վարձը՝ միայն որաճաչ...
... Բայց բացվում եյին մասրենու վարդերը

...
Յես յերեկ տեսա ե՛ն արտերը,
Տեսա խոտ հնձող բանակին,
Շարվել եյին խոտի բարդերը
Տեսա և կոլխոտիկ Արշակին:
—Վողջույն քեզ, հանդերի հերոս,

Իմ յերիտասարդ—ձեր հայր,
Ամուր կաց դաշտի դերձերում,
Վորպես անասան մի ժայռ—
Յեւ ինչքան նայես այդ ծառին,
Թող պատմե քեզ կուլակ Խնչանից,
Վոր քո սրտում վրե՛ժը վառի,
Դաշտերի արևի կրակից:
Արտերի ծովում կապույտ
Որորում է մի մասրենի,
Ճերմակ վարդեր ե կապում,
Ու շարում կանաչ ուսերին:
Ինչքա՛ն ես փոխվել ու աճել,
Մասրենի՛, իմ սիրուն մասրենի,
Կարծես թե ուրիշ ես, ե՛ն չես
Մասրենի՛, իմ ճերմակ Մասրենի...

8 Ա Ն Կ

1. Կարմիր բարերը
2. Արթիկին
3. Վերելի յերգեր
4. Հուշերգ
5. Արձանը
6. Ռազմական հուշգիր
7. Դաշնակ ինտերվենտներին
8. Արշավի յերգերից
9. Նամակը
10. Խոտահարք
11. Բատրակի յերգեր
12. Գեղջկուհուն
13. Քրդուհուն
14. * * *
15. Կոլխոզի աղջկան
16. Կոլխոզային մոտիվներ
17. Յես ու մեքենաս
18. Ճերմակ կուլակները
19. Մարտնին



«Ազգային գրադարան»



NL0342911

9170 69 407

36870

32-11
CA 933

1

2/

8007

Григор Акопян
ПЕРВЫЕ МЕЛОДИИ

ГИЗ ССР Армяния, Ереван